

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՊՐՕԵԿՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Ազգութիւնների խնդիրը):

Անցեալ Տեսութեան մէջ ես ցանկութիւն յայտնեցի, որ նորակազմ երիտասարդութիւնը մոտաք գործի քաղաքացին խորհրդարանների մէջ թէ Թիֆլիսում և թէ Կովկասի այն քաղաքներում, ուր նոր Պոլիտենիէն քաղաքացին ինքնավարութեան մասին պէտք է մոտաք գործի:

Յատկապէս ինչ վերաբերում է Թիֆլիսին, այդ ցանկութիւնը բղիւսում է խորը պատճառներից: Պատճառները զաղափարական են, և անկարող է նոցա կարեւորութիւնը չը զգալ նա, ով միայն ականջ ունի լսելու քաղաքացին խօսակցութիւնները, աչք ունի կարդալու տեղական թերթերը, որոնց սիւննակների մի պատկառելի մասը նւիրւած է քաղաքացին ընտրութիւնների խնդրին:

Ուլքեր պէտք է ընտրւեն խորհրդարանի իրաւասուններ, — ահա հարց, որը բորբոքւում է ամեն անգամ, երբ ընտրութիւնների ժամանակները մօտենում են, որպէս ամեն տեղ, նոյնպէս և քաղաքացին խորհրդարանների համար:

Խնդիրը կնճռոտ է, որովհետեւ ընտրութիւնների մէջ դեր են խաղում ոչ թէ երկու իրար հակառակ կուսակցութիւններ, այլ մի քանի իրար ոչ նման կուսակցութիւններ:

Նախ այդտեղ արտափայլում է քաղաքիս մէջ ոյժ կազմող ազգութիւնների խտրութիւնը, զլիսաւորապէս հայ և վրացի, մասամբ նաև ռուս ազգութիւնները: Ուրեմն ահա ազգութիւնների տեսակէտ — հայկական և վրացական:

Հայկականը, իբր զօրեղագոյնը, բաժանուում է մի քանի գրուպպաների, համախմբւած ոյժ կազմող անձերի շուրջը:

Ինչով են սոքա ոյժ կազմում: Այդ հարցի պատասխանը հեշտ կը լուծւի, եթէ իմանանք ովքեր են քաղաքի ընտրողները: Յայտնի է, որ ընտրողները տնատէրերն են և առևտրական գիլդիականները, թէ առաջւայ և թէ նոր պոլոժենիէներով, այժմ աւելի սահմանափակ, քան առաջ, որովհետև այժմ աւելի խոշոր տնատէրեր և վաճառականներն են ընտրողներ, քան առաջ: Բայց սկզբունքը միևնոյնն է:

Արդ, Թիֆլիսի տնատէրերի մեծագոյն մասը, որպէս նաև բոլոր վաճառականները կապւած են բանկային և թէ կալածական-վարկային հիմնարկութիւնների հետ: Հետևապէս և բոլոր այն անձերը, որոնք այդ հաստատութիւններում բարձր դիրք են բռնում և որ և է չափով ունեն հասարակական գործունէութեան համար կոչում, — իոցա բոլորի համար հեշտ է եղել իրանց հետ կապել տնատէրերին և վաճառականներին և այդպիսով ամենամեծ ոյժը կազմել քաղաքային ընտրութիւնների համար:

Բոլոր նոքա, ովքեր այդ արտօնութիւնները չունեն, բայց և կոչում և ընդունակութիւններ ունեն քաղաքին ծառայելու, թէ որպէս դումայի լոկ անդամներ և թէ մանաւանդ քաղաքային վարչութեան մէջ, — դոքա ստիպւած են եղել իրանց մտաւոր և հոգեկան կարողութիւնը ծառայեցնել յօգուտ փողով հարուստ և միևնոյն ժամանակ հասարակական ձգտումներ ունեցող մարդկանց:

Տրւած հանգամանքների մէջ նոցա անկախ գործելը դարձրած է անհնարին. կամ թէ չէ սոքա պէտք է լինէին անպայման անկախ բնաւորութեան և բարձր ընդունակութիւնների տէր մարդիկ, որ կարողանային բոլոր մանր հաշիւներից վեր ու վեր սաւառնել և ընդհանուրից նկատուած մեծ աստղեր երևալ: Բայց այսպիսիներին դեռ ևս չէ կարողացել արտադրել քաղաքային մթնոլորտը, հետևապէս մեր խօսքը կարող է վերաբերւել միայն սովորական տաղանդներին և ձգտումների տէր մարդկանց:

Արդ, ինչը պէտք է հակազիռը կազմի հարուստների ազդեցութեանը, ինչ է հարկաւոր ստեղծել՝ որպէս զի ունեւորների իշխանութիւնը չը փոխւի պոռոկրատիայի, այլ օրէնքով ապահով-

ւած ունեւորների ազդեցութիւնը մնայ այն սահմաններում, որ համակրելի լինի ընդհանրութեանը:

Դորա համար հարկաւոր է արթուն հասարակաց կարծիք: Դա մի դեղ է որ առաջարկում է ամեն հասարակական չարիքների դէմ. լաւագոյն միջոց չը կայ. պէտք է դիմել այդ միջոցին նաև այս դէպքում:

Ահա այստեղ է, որ երիտասարդութիւնը կարող է և պարտաւոր է դեր խաղալ, մոցնելով դումայի մէջ էլեմէնտ, որից ցայժմ ընտրութիւնների ղեկավարները խորշել են: Աւելի անկախ իւր գործառնութիւնների մէջ, աւելի տրամադիր հասարակաց կարծիքի հետ հաշիւ տեսնելու, աւելի զոնէ ձգտող ժողովրդական ստոր խաւերի շահերը պաշտպանելու, աւելի մօտ մամուլի խօսքին,—նա, հասարակութեան այդ թարմ շերտը, կարող է նաև մի թարմ հոսանք մոցնել հասարակաց կապերով երբեմն շատ կաշկանդւած մարդկանց ժողովում, որ ներկայացնում էր քաղաքային խորհրդարանը:

Իմ խօսքը առհասարակ երիտասարդների մասին չէ, այլ միայն մեր երիտասարդութեան յառաջադէմ մասի վրայ է: Ներկայանալ քաղաքային ընտրութիւններին, որպէս որոշ ուղղութեան ներկայացուցիչներ, ահա թէ ինչը կը լինի նոր և ինչը միայն կարող է որ և է ներգործութիւն ունենալ խորհրդարանի ցայժմեան կազմի վերայ:

Իսկ դորա համար պէտք է յաջողութիւնը հիմնել ոչ թէ հին պարտիաների հովանաւորութեան վերայ, այլ միայն յառաջադէմ մամուլի և կուսակցութեան պաշտպանութեան վերայ:

Ինչպէս էլ լինի վերջնական յաջողութիւնը, բայց իւր կուսակցական անկախ բնաւորութիւնը նա չը պէտք է ուրանայ. և այդ կուսակցութեան պատկանողը թէև ստիպւած կը լինի դաշնակցել, բայց ոչ ընդունել հովանաւորութիւն և չը պէտք է ուրիշների թւի տակ գործի: Աւելի լաւ է մարտնչել և ոչ մի յաջողութիւն չունենալ, քան ընտրել ուրիշների նշանաբանի ներքոյ և ապա դաւաճանել այդ նշանաբանին:

Եւ իւր առաջին գործը պէտք է լինի նպաստել մի խնդրի վճռելուն, որի նկատմամբ ցայժմեան կուսակցութիւնները երբեք ընդունակ չեղան մտածելու և ոչ էլ հաշուելու իրար հետ:

Մեր խօսքը ազգութիւնների ներկայացուցչութեան մասին է:

Քաղաքային ընտրութիւնների գործում առաջին մեծ խնդիրը, որին ամեն մի մասնակցող հանդիպում է, դա՝ ազգութիւնների խնդիրն է: Թիֆլիսը ունի գլխաւորապէս հայ, վրացի և ռուս բնակիչներ: Դոցանից հայերի ու վրացիների մէջ մի բաւականին շեշտած կռիւ կայ ընտրելիք ձայնաւորների թւի և դումայում ունենալիք ազդեցութեան մասին: Այդ կռիւը թէ խուլ է և թէ բացայայտ: Դա այնքան չի խոստովանուում հրապարակի վերայ, բայց այդ խնդրի գոյութիւնը իրան զգացնել է տալիս դումայի վճիռներից, վիճաբանութիւններից, առաջարկութիւններից շատ շատերի մէջ, իսկ հրապարակախօսութեան մէջ բազմաթիւ յօդաածներ թելադրած են հէնց ազգութեան շահերի տեսակէտից:

Ոչ ոք չի ուրանում, որ քաղաքի խորհրդարանի համար հարկաւոր են ոչ թէ անպատճառ այս ու այն ազգութիւնների պատկանող անձեր, այլ առհասարակ օգտակար մարդիկ: Բայց բանն էլ հէնց նրանումն է, որ օգտակար մարդիկ կան բոլոր ազգութիւնների մէջ էլ, բայց ընդհանուրից վկայւած, ընդհանուրից ճանաչւած անպայման օգտակար և անաչառ մարդիկ քիչ են թէ հայերի մէջ, թէ վրացիների մէջ և թէ ռուսների մէջ: Քաղաքին հարկաւոր են ութսուն հոգի ձայնաւորներ, բայց ութսուն հոգի ամենքից ճանաչւած իբր քաղաքի համար անհրաժեշտ մարդիկ չկան: Դա անհերքելի է:

Ես ուզում եմ դուրս բերել թէ ինչպէս է ծագում ազգութիւնների խնդիրը, և ուզում եմ ասացուցել որ թէև չարիք, բայց նա շատ բնականօրէն է ծագում, որը հետևապէս ուրանալ, ծածկել չը պէտք է, այլ պէտք է ուսումնասիրել և նաև այդ խնդրում մի ուղղութիւն մշակել:

Եթէ, ասում եմ ես, ութսուն հոգի ընդհանուրից իբր անպայման նպատակադրմար ճանաչւած մարդիկ լինեն քաղաքի ընտրողների մէջ, ազգութիւնների խնդիրը, եթէ բոլորովին չը վերանայ էլ, այնու ամենայնիւ նորա լուծումը շատ կը հեշտանայ: Հասա-

րակաց կարծիք վիրաւորելը կողմնակի ու ցածր դիտումներով անպատիժ անցնել չի կարող։ Եթէ հասարակաց կարծիքն է միաբերան կանչում մարդկանց որ և է պաշտօնի, — այլ և այլ խմբակների քաղաքականութիւնը ոչ մի շանս չունի յաջողութիւն գտնելու և յամենայն դէպս ոչ մի կողմից հաւանութիւն գտնել չի կարող։ Եւ եթէ ութսուն այդպիսի մարդկանց թւում լինեն այլ և այլ ազգութիւններ նոյն իսկ բոլորովին անհամապատասխան տոկոսներով, համեմատած ամեն մի ազգութեան թւին, այնուամենայնիւ դա աչքի չէր ընկնիլ, բողոքների և տրտունջների տեղիք չէր տալ։

Այդ տեսութիւնը ես համարում եմ անհրեքի, և որովհետեւ նա անհրեքելի է, ես ուզում եմ օգտւել դորանից մի քանի գործնական եզրակացութիւններ դուրս բերելու համար։

Ազգութեան տեսակէտներից չը պէտք է նայել այն քաղաքային գործիչների վերայ, որոնք յայտնի են եթէ ոչ իբր սմենասանհրաժեշտ մարդիկ, գոնէ իբր քաղաքային գործերը իրանց սրտին մօտ առնող, քաղաքային խնդիրներով հետաքրքրուող և իրանց օգտակարութիւնը ապացուցած մարդիկ, բոլորովին անկախ նոյն իսկ այն բանից, ոչ միայն թէ ինչ ազգութեան, այլ և թէ ինչ դասակարգին են պատկանում։

Բայց թերեւ ութսուն հոգու ցուցակի մէջ այդպիսի ձայնաւորներ կարելի լինի մտցնել ոչ շատ աւելի, քան երկու տասնեակ գործիչներ ցայժմ գործած անձերից։ Նոցա անունները այն ամենքի բերանումն են, ովքեր հետաքրքրւել են քաղաքային գործերով։

Այդ անձերը, ինչ ազգութիւնների և ինչ դասակարգերի նաև պատկանում լինեն, իրանց անցած բեղմնաւոր գործունէութիւնով պէտք է համարեն իբրև բարոյական իրաւունք ձեռք բերած ամենքի ուշադրութեանը արժանանալու և խորհրդարանում տեղ բռնելու։

Բայց ինչ են ներկայացնում քաղաքային խորհրդարանի միացած անդամները, որ և սուլար մեծամասնութիւնն են կազմում Դոքա մարդիկ են, որոնք, թող ներքի մեզ ասել, յայտնի են ոչ այնքան իրանց գործունէութիւնով, որքան իրանց ազգանունների վերջաբանութիւնով։ Դոքա Եփեսոսներ են, Յէներ են, Ռէներ են։ Ահա այստեղ է որ ծագում է ազգութիւնների խնդիրը։ Յայտնի լինելով զխաւորապէս իրանց ազգանունների պոչերով, նոքա նաև խորհրդարանում ուրիշ դեր

չեն կատարում, բայց եթէ որպէս սե ու սպիտակ գցողներին, և բոլոր այն խնդիրներում, ուր որ և է ազգութեան շահ կարող է լինել, — եանցը՝ եանցի համար է, ձէն՝ ձէնի համար:

Արդ, եթէ անհրաժեշտ կերպով խորհրդարանում պէտք է գոյութիւն ունենան այդպիսի ձայնաւորներ, ոչ մի հիմք չը կայ պահանջելու, որ հայը ցանկանայ ձէ-երի բազմութիւնը, վրացին՝ եանցերի բազմութիւնը, քանի որ եանցը և ձէն իրանց անձնական արժանաւորութիւններով իրար բոլորովին հաւասար են:

Եւ ահա այն կէտը, որտեղ կարող են հեշտութեամբ դեր խաղալ ազգային խնտինկները, եթէ միայն մի խելացի հայեացք չը մշակուի, որ ընդունելի լինի բոլոր կուսակցութիւններին:

Ձը պէտք է վիրաւորել ազգային զգացմունքները և օգուել միմիայն ոյժից, — ահա ընդհանուր կանոնը: Ներկայ դէպքում ոյժը հայի կողմն է, և մենք շատ ուրախ ենք այդ հանգամանքի համար, որովհետեւ մեծ հաւատ ունենք դէպի հայի արդարամտութիւնը:

Իսկ արդարութիւնը պահանջում է մի յայտնի հաւասարափութիւն ներկայացուցիչների թւի մէջ ազգութիւնների տեսակետից: Հարկաւոր է 80 ներկայացուցիչներ ընտրել: Այդ ութսուն հոգու մէջ պէտք է նախ մոտեն բոլոր յայտնի և ընդհանուրից ճանաչած քաղաքային դործիչները, ինչ ազգութեան և պատկանում լինեն հոգա, իսկ ապա եանցերը և ձէ-երը և ով-երը բաժանւո՞ն նպայած թէ ամեն մի ազգութիւն ինչ տոկոս է կազմում քաղաքի բնակիչների մէջ:

Սա մի շող է, որի վերայ համաձայնութիւնը կարող է հեշտութեամբ կայանալ:

Եթէ մի այդպիսի սկզբունք չընդունուի իբրև հիմք՝ ընտրելիներին նախնական ցուցակներ կազմելիս կուսակցական ժողովներում, ամեն ինչ այն ժամանակ կը ֆնայ պատահականութեան, և հէնց այդ միջոցին է, որ կը կատարեն անպատահութիւններ թէ հատ-հատ անձերի և թէ ազգութիւնների նկատմամբ:

Այդպիսի անպատահութիւնների դէմն առնելու համար պէտք է նախնական համաձայնութիւն հետեւելիք սկզբունքների մասին: Իսկ սկզբունքները, ըստ իս, պէտք է լինեն հետեւեալները.

1. Յուցակ այն անձերի, որոնց ընտրելը ցանկալի է նոցա օգտակար գործունէութեան պատճառով անցեալում: Այստեղ ոչ մի դեր չեն կատարում ոչ ազգութիւնը և ոչ դասակարգը, այլ միայն այն յատկութիւնները, որոնցով մարդիկ ընդհանուրից ծանաչւած են որպէս խնդիրներ ըմբռնող, դատելու ընդունակ, բազմակողմանի զարգացած և խորհրդարանի չարդը զգացող և պահպանող մարդիկ:

Այդ անձերը այնքան են յայտնի, որ նոցա ցուցակը կարող է կազմել թէ հայը, թէ վրացին, թէ ռուսը, և հաղիւ թէ այդ երեք ազգութիւնների ներկայացուցիչները, եթէ առանձին-առանձին կազմելու լինեն, իրարից շատ տարբեր ցուցակներ ներկայացնեն:

Այդ անձերը փոքրաթիւ են. նոքա կարող են իրար հետ անհաշտ լինել, տարբեր ուղղութիւններ ունենալ, բայց նոքա չեն կարող իրար անձնական արժանաւորութիւնները չը ճանաչել: Հետեւաբար անմիտ բան կը լինի նոցա անունները չը դնել բոլոր կուսակցութիւնների ցուցակներում: Այդպիսիներին պէտք է, ըստ իս, հարկ տալ ամեն մի կուսակցութիւն: Պատահաբար նոքա բոլորն էլ կարող են միայն մի՝ ազգութեան պատկանել, որպէս կարող են այլ և այլ ազգութիւններից լինել:

2. Խնդիրը այժմ այն ընտրելիների մասին է, որոնց գործունէութիւնը այնպէս է եղած, որ չեն կարող յաւակնել ամենքի ցուցակում չիշատախած լինել: Այդ այն անձերն են, որոնց հաւասարները կը գտնեն ամեն մի ազգութեան մէջ, որոնք ուրեմն կարող են յաղթութիւն տանել ղլխաւորապէս այն պատճառով, որ նոքա պատկանում են այս և ոչ այն ազգութեան:

Արդ, պէտք է արդեօք հաշտութեան հող որոնել այդ ընտրելիների համար? Անկասկած: Եւ ահա դոցանկատմամբ է որ, ըստ իս, պէտք է գործադրի պրոպորցիայի սկզբունքը ըստ ազգութիւնների:

Ես ենթադրում եմ, որ վերը չիշած անպայման ընտրելիների թիւը կը լինի քսան, հետեւաբար կը մնայ վաթսուն, որի թւում արդարութեան դէմ ոչինչ չի լինիլ, եթէ մտնեն այլ և այլ ազգութիւններ, մօտաւորապէս այն պրոպորցիայով, ինչ թիւ որ նոքա կազմում են քաղաքի մէջ:

Իսկ ովքեր են վճռողը, թէ այն դիցուք 60-ի մէջ զոհերը, որ վրացիքը և ուրիշ ազգերից լինեն: Ես կը պատասխանեմ՝

քանի որ խօսքը ընդհանուրից չը ճանաչած և ընդհանուրից չը գնահատուած անձերի մասին է, պէտք է թողնել հայերին՝ ցոյց տալ իրանց ճանաչ ազգակիցներին, թողնել վրացիներին՝ ներկայացնել իրանցը և այլն: Մի այնպիսի ժամանակ, երբ Կովկասի այլ և այլ ազգութիւնները չեն կարող պարծենալ իրար փոխադարձ լաւ ծանօթութիւնով, ով կարող մի հայ գործիչին աւելի լաւ ճանաչել, եթէ ոչ հայ համայնքը, վրացուն՝ վրացի համայնքը: Որովհետեւ ով կարող է առանց ազգային նախապաշարմունքի գնահատել մի վրացու արժանիք, եթէ ոչ ինքը վրացի համայնքը, հային՝ հայ համայնքը, քանի որ ներկայ պայմաններում միայն վրացին ոչինչ ազգային նախապաշարմունք չունի վրացու դէմ, միայն հայն է, որ ազգային նախապաշարմունք չունի հայի դէմ, և վրացին աւելի լաւ է ճանաչում իւր ազգակից գործիչներին, քան հայը, հայը աւելի լաւ է ճանաչում իւր ազգակիցներին, քան վրացին, ռուսը, գերմանացին և այլն:

Վերը ներկայացրած սխտեմը ընտրութիւնների, ես այդ լաւ գիտեմ, ունի իւր գործնական դժարութիւնները: Ես այդ դժարութիւնները ինքս կը թւեմ յետոյ. բայց այդ որ սխտեմն է, որ զուրկ է դժարութիւններից: Սխտեմները միայն համեմատական արժէք կարող են ունենալ: Միայն այն սխտեմն է առանց դժարութիւնների և անյարմարութիւնների, որը, լաւ քննելիս՝ ոչինչ դրական արժէք չի ներկայացնում: Այսպիսի մի սխտեմի դէմ կարող են դնել միւսների հայեացքները, որ արտայայտուած են մամուլի մէջ: Բայց ես գտնում եմ, որ նոքա սխտեմներ չեն, այլ պոլիտիկոսութիւն, ПОЛИТИКАНСТВО:

Դատեցէք ինքներդ, և տեսէք թէ քաղաքային յայտնի գործիչների և միւսնոյն ժամանակ մամուլի ներկայացուցիչների կողմից ինչ մտքեր են յայտնուում, մտքեր, որոնց մասին դեռ վիճում էլ են:

Դոցանից մէկը յատուկ սեպհականութիւն է պ. Աբգար Յովհաննիսեանի, միւսը՝ պ. Նիկողաձէի: Առաջինը յօդաւորներ է տպում այս իմաստով, թէ պէտք է ընտրել միայն Թիֆլիսի հին քաղաքացիներին և դուրս վճռուել զարարողներին մի կողմից, եկւոր վրացիներին՝ միւս կողմից: Ահա ձեզ մի սխտեմ, եթէ արժանի էք համարում այդպիսի անուն տալ նրան:

Պատասխանելով «Արձադանք»-ին՝ պ. Նիկողաձէն դնում է իւր սխտեմը՝— ընտրել միայն արժանաւորներին: Բայց պարոն, դա սխտեմ չէ, որովհետեւ դուք չէք տալիս որ և է մաշտաբ արժանաւորութիւններ ճանաչելու, և ամեն քայլափոխում մենք կարող ենք մի եանց-ի և մի ձէ.ի մասին կարծիքներով տարբերել, ինչպէս որ այդ շատ և շատ յաճախ է պատահել ձեր և ձեր ընկերակիցների մէջ ներկայ խորհրդարանում:

Ինձ թւում է, թէ ազգութիւնների ներկայացուցչութեան համար ընդհանուր համաձայնութեամբ մշակած սխտեմի պակասութեան պատճառով, մեր գործիչների մոտաւոր և ոգեկան ոյժերը մեծ մասամբ ապարդիւն են անցնում: Ընտրողական պայքարը դնելով ազգայնութեան հողի վերայ, մեր գործիչները իրանց բոլոր ոյժերը լարում են դէպի այդ կողմը, միանգամայն մի կողմ թողնելով բուն քաղաքային խնդիրները: Քաղաքային խորհրդարանը ընտրւում է չորս տարով: Հետեւապէս ընտրութիւններն էլ պէտք է կատարեն այն խնդիրների հիման վերայ, որոնք պէտք է լուծուին ստանան այդ չորս տարում: Արդ, ազգային ներկայացուցչութեան հարցը այնքան մթնեցնում է ընտրողների միտքը, որ նոքա պատրաստ են բոլոր խնդիրները մոռանալ, միայն թէ իրանց ազգութիւնը չը տուժէ: Եւ դորա համար ինչ հնարներ չասէք՝ որ գործ են դնում: Մարդիկ ընկած են ընտրողների յետեւից, նոցա նպաստաւոր ձայնին ապահով լինելու համար: Բայց յանուն ինչ գաղափարի են նոքա այդ դիմումներն անում: Յանուն ազգութեան:

— Հայերը ուզում են մեզ դուրս քշել. եկէք վրացիք, օգնեցէք որ ընտրենք:

— Վրացիք պատրաստուում են հայերին քշել. արիք, հայեր, մեզ օգնեցէք...

— Դուք, զարաբաղցիք և այլ օտարականներ, եկէք միացէք մեզ, վրացիներիս, հետ ընդդէմ նոցա, որոնք ուզում են ընտրել միայն հին Թիֆլիսցիներին...

Եւ այլ դոցա նման խաղեր...

Դա քաղաքացիական բարբարոսութիւն է, քաղաքացիական վախճանութիւն է, եթէ ինձ թոյլ կը տրւի այսպիսի մի նորահար խօսք գործ ածել մի ուղղութեան մասին, որը սակայն նոր չէ,

այլ հին, գոնէ այնքան հին, որքան տարի գոյութիւն ունի քաղաքային ինքնավարութիւնը Թիֆլիսում:

Քաղաքացիականութիւնը պահանջում է որ ընտրող ժողովուրդը գիտակցօրէն մերձենայ ընտրողական տուփերին. քաղաքացիականութիւնը պահանջում է, որ ընտրողը ընտրելիի անունը կապի այն խնդիրների հետ, որ այդ ընտրելին ընդունակ է պաշտպանելու քաղաքային խորհրդարանում, կամ պատկանում լինի այն կուսակցութեանը, որ խնդիրների որոշ ծրագիր և գործունէութեան որոշ ուղղութիւն ունի: Բայց քաղաքացիական գիտակցութեան համար ինչ յառաջդիմութիւն կարելի է սպասել, երբ ընտրողը 1893 թւին պէտք է մերձենայ ընտրողական տուփին նոյն այն հարցով, ինչ հարց որ նա ունէր լուծելու, երբ նա մերձեցաւ նոյն տուփին 1891 թւականին, նոյն հարցով՝ 1887 թւականին, 1883-ին, 1879-ին, 1875-ին: Մի հարց, ուրիշ, որ մնում է անվերջ. Եւ անվերջ է մնում, այդ հարցը միայն այն պատճառով, որ ընտրութիւնների գոնէ ցայժմեան ղեկավարները ուղեցել են մթութեան մէջ խաղեր խաղալ. Յառաջդիմական մի կուսակցութիւն և յառաջդիմական մամուլը չեն կարող հաւանութիւն տալ այդպիսի խաղերին: Վերացնել խնդիրը ասպարէզից չի կարելի. ես գոնէ չեմ հաւատում անկեղծութեանը այն մարդկանց, որոնք պնդում են թէ իբր նոցա համար գոյութիւն չունի ազգութեան խնդիրը: Նա գոյութիւն ունի և գոյութիւն ունի ոչ միայն ղեկավարների համար, այլ մանաւանդ ընտրող ժողովրդի համար: Զը խոստովանել այդ՝ կը նշանակէ էլի շարունակել նոյն տեսակ խաղեր, ինչ մինչ այժմ, շարունակել կասկածոտ աչքով նայել իրար վերայ և ամեն ինչ կեղծել: Ոչ, խնդիրը կայ, վերացնել նորան անկարելի է, հետևապէս յառաջդիմութիւնը կարող է այդ նկատմամբ կայանալ միայն արդարութեան վերայ հիմնած մի սխտեմ ստեղծելու և ընդունել տալու մէջ:

Պրոպորցիական թւով ընտրելու միտքը ինքն ըստ ինքեան նոր չէ. բայց նորութիւնը այն կը լինի, որ նա սխտեմ ճանաչւի և պարտաւորի: լինի բոլոր գոյութիւն ունեցող կուսակցութիւնների համար: Այլապէս այն ազգութիւնները, որոնք մեծամասնութիւն չեն կազմում թէ քաղաքում ընդհանրապէս և թէ մանաւանդ

ցենզ ունեցողների ցուցակներում, այդ ազգութիւնները, ասում եմ ես, միշտ փնասելու վտանգի ենթարկւած կը լինեն և հէնց այդ պատճառով, և բնականաբար, նոցա բոլոր ջանքը կը լինի ուժեղ մեծամասնութեան փնասել և նորա դէմ լարւած լինել: Ես ոչ մի օգուտ չեմ տեսնում այդ բանում ոչ մեծամասնութիւն կողմող հայերի համար և ոչ մանաւանդ քաղաքային գործերի կանոնաւոր ընթացքի և որ զլիսաւորն է՝ գործերի յառաջդիմական ոգով վարելու համար:

Ես ասում եմ՝ գործերը յառաջդիմական ոգով վարելու: Այո, երբ հայերը, վրացիք և այլն առաջուց հաստատ կ'իմանան, որ նոցանից ամեն մի ազգութիւն պրոպորցիական թւով կը գտնւեն քաղաքային խորհրդարանում, այն ժամանակ գործիչների ամբողջ էներգիան ի գործադրել ազգութեան շահի համար ձայներ որսալու և իրար դէմ որողայթներ լարելու վերայ, այլ այդ նոյն էներգիան կը գործադրւի գործնական խնդիրների ուսումնասիրութեան և նոցա համար կուսակիցներ գտնելու վերայ:

Ահա, երբ ազգային ներկայացուցչութեան խնդիրը վաղօրօք համաձայնութեամբ դրստած կը լինի, այն ժամանակ ասպարէզ կը լինի բացած բուն գործերի վերայ մտածելու: Ովքեր ցանկանում են որ մի աւելի առողջ մթնոլորտ ստեղծւի քաղաքային ինքնավարութեան գործունէութեան համար, չեն կարող չուզենալ որ ասպարիզից մի այդպիսի մեծ խոչնդոտ հեռացւի, քանի որ նա թունաւորում է ազգերի յարաբերութիւնները և մթնացնում մտքերը. իսկ այդ պայմաններում առողջ գործունէութիւնը գրեթէ անհնարին է:

Գանք այժմ գործնականին, այսինքն տեսնենք թէ մեր ներկայացրած սիստեմը որքան գործնական է, որքան կարող է դիմանալ այլ և այլ պատեհութիւններին և իրաւացի պահանջներին:

Որտեղ խօսք կայ նախնական համաձայնութեան մասին, այնտեղ պէտք է ենթադրել մի մասնաժողով: Որէնքը, ինչպէս յայտնի է, թոյլ է տալիս ընտրութիւնների գործի համար մասնաւոր ժողովներ կազմելու: Հետեւապէս այլ և այլ կուսակցութիւնների ներկայացուցիչներից կարող է կազմւել մի մասնաժողով, որը նախ

կ'որոշի, թէ իրանց հին ձախաւորներէից որոնց ընտրութիւնը ամենաանհրաժեշտ է և որոնց ընտրութիւնը ուրեմն ցանկալի է ընտրողական պատենհութիւններէ վտանգից աւելի ազատ պահել: Պարզութեան համար ենթադրենք թէ դոցա թիւը հաւաւ 20-ի:

Ապա նոյն մասնաժողովը, համաձայն քաղաքի ստատիստիկային, կ'որոշի թէ մնացած 60 հոգուց որքանը պէտք է լինեն հայ, որքան վրացի և որքան ուրիշ ազգութիւններէից: Ենթադրենք թէ այդպիսով որոշեց 24 հայերի, 17 վրացիների, 13 ռուսների և 6 ուրիշ ազգութիւնների համար:

Ունենալով այդ թւերը իրանց ձեռքին, ամեն մի մասնաւոր կուսակցութիւն, թէկուզ դոցա թիւը լինի հինգ կամ տասը, պարտաւոր է իւր ընտրելիների ցուցակի մէջ մոցնել նախ վերը չիշած 20 հոգու անունները, իսկ մնացեալում՝ անպատճառ 24 հայ, 17 վրացի, 13 ռուս և 6 ուրիշ ազգութիւններից (կրկնում ենք, որ այդ թւերը ենթադրական են, բայց աշխատել ենք մօտաւորապէս ճիշդ լինել):

Այլ և այլ ցուցակները իրար հետ մօտաւորապէս հաշուեցնելը՝ կը լինի արդէն կուսակցական բանակցութիւնների գործ: Օրինակ, եթէ հայերը բաժանւած լինեն չորս գրուպպաների, որոնց ցուցակները այն երկրորդ կարգի հայ ընտրելիների վերաբերմամբ, որոնց թիւը ենթադրաբար 24 է, իրարից տարբերուում լինեն: Այդ դէպքում այդ գրուպպաները բանակցում են, իսկ վիճելի անունների մասին վճիռը թողնում են ընտրողներին կատարել:

Այս պրօեկտի ոգով՝ կուսակցական էթիկան պահանջում է, որ վրացիք անպայման ձայն տան 24 ընտրելի հայերից նրանց, որոնց անունները կան բոլոր հայ գրուպպաների ցուցակներում: Նոյնպէս և հայ գրուպպաների բոլոր ցուցակներում պէտք է լինեն այն բոլոր վրացոց անունները, որոնց մասին վրացի բոլոր գրուպպաները համերաշխ են:

Բոլոր վիճելի անունների մասին վճուելը, բնական է, որ կը մնայ ընտրողական ժողովին, որը վերջ ի վերջոյ տէրն է նաև բոլոր նախնական վճիռներին:

Ներկայացրած սխտեմը ապահովում է:

1) Խորհրդարանին՝ նորան ցայժմ ծառայածներից ընտրելագոյն մասը, այսինքն այն ամենքին, ովքեր իրանց լաւ և օգտակար

գործունէութեամբ ձեռք բերած բարի համբաւով ամենաարժանաւորներն են նորից ընտրւած լինելու:

2) Ազգութիւններին՝ արդարութեան վերայ հիմնւած ներկայացուցիչների թիւը խորհրդարանում:

3) Կուսակցութիւններին՝ նոցա ազատ գործունէութիւնը, քանի որ մեր սիստեմով այդ գործունէութիւնը, մանաւանդ կուսակցական պրոպոգանդան, չի վերանում, այլ միայն սահմանափակում է յօգուտ ընդհանուր գործին:

Մի խօսք ևս: Մեր սիստեմով ազգերի ներկայացուցիչները թւով կարող են կատարելապէս համապատասխան չլինել ազգաբնակչութեան թւին: Այսպէս օրինակ, այն 20 առաջին կարգի ընտրելիների մէջ կարող են պատահամբ լինել 10 ռուս, 6 վրացի, 4 հայ, ուրեմն և ընդհանուր թւում հայեր կը լինեն $24+4=28$, վրացի $17+6=23$, ռուս $13+10=23$: Բայց այն 20 հոգուց կարող են լինել հայեր 12, վրացի 5, ռուս 3, ուրեմն և ընդամենը հայեր կը լինեն $24+12=36$, վրացի՝ $17+5=22$, ռուս $13+3=16$:

Այդպիսով ճիշդ պրոպոգանդայից աւելի ներկայացուցիչներ կ'ունենայ այն ազգութիւնը, որը մինչ այժմ աւելի շատ է առաջացրել հանրածանօթ օգտակար քաղաքային գործիչներ:

Կեանքը ունի իւր լոգիկան, որը միշտ թւաբանականը չէ, բայց վերջինիցս միշտ աւելի հարկադրող է, որովհետեւ աւելի կենդանի է: